ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Մխիթարյան Ռիմա Գագիկի**

# Իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները (պատմատեսական վերլուծություն)

**ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

**Երևան - 2016**

---

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

**Мхитарян Рима Гагиковна**

# Проблемы формирования и развития социологической школы права (историко-теоретический анализ)

## АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01- «Теория и история государства и права; история государственных и правовых учений»**

**Ереван-2016**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ.Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ.Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Զ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ «**ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 4-ին, ժամը $11^{00}$-ին. Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (375051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2016թ. մայիսի2-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝**
**իրավաբանության գիտությունների թեկնածու՝** **Զ.Հ. Հայրապետյան**

---

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р.Г. Петросян**
кандидат юридических наук **О.З. Саргсян**

Ведущая организация: **Академия полиции РА**

Защита состоится 4-ого июня 2016г. в $11^{00}$ часов на заседании специализированного совета 063 Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (адрес: 375051 г.Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читательном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 2-ого мая 2016г.

**Ученый секретарь специализированного совета,**
**кандидат юридических наук** **Дж.А. Айрапетян**

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

**Թեմայի հետազոտության արդիականությունը.** Մեզանում ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ձևավորվող իրավունքի համակարգի առումով նշանակալի դերակատարում ունի իրավահասկացության տիպը: Իրավահասկացության տիպը հսկայական ազդեցություն ունի թե՛ իրավաստեղծ ոլորտում և թե՛ իրավակիրառ պրակտիկայում: Այս հիմնահարցն ավելի սրությամբ է երևան եկել արդի դարաշրջանում տարբեր իրավական ընտանիքների (համակարգերի) մերձեցման և փոխներգործության գործընթացների համատեքստում: Իրավական համակարգերի մերձեցումը և փոխներգործությունը ժամանակաշրջանի օբյեկտիվ գործընթացներից մեկն է, որը պայմանավորված է տնտեսական, քաղաքական, իրավական գլոբալացման, պետությունների առավել սերտ փոխներգործության, տնտեսական և այլ ոլորտներում առավել փոխհամագործակցության գործոններով: Այս առումով, իրավունքի հասկացության տիպերը, մասնավորապես՝ պատմության փորձությանը դիմացածները, այդ թվում իրավունքի սոցիոլոգիական դպրոցը, ունեն իրենց անելիքները՝ հասարակական զարգացման արդի փուլում: Իրավունքի սոցիոլոգիական դպրոցը ձևավորվելով և զարգանալով XIX-XXI դարերում, արդեն իսկ նշանակալի դեր է խաղացել հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման, արդարադատության արդյունավետության բարձրացման, պետական իշխանության սահմանափակման, մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ձևավորման և սոցիալ - իրավական պետության կայացման հարցերում:

Բացի դրանից, իրավունքի սոցիոլոգիական դպրոցը նպաստել է իրավունքի ավելի խորը հասկացության ընկալմանը, որ իրավաստեղծ գործունեությունն ամենևին էլ պետության բացարձակ մենաշնորհը չէ, որ իրավաստեղծ սուբյեկտների շրջանակը ավելի լայն է, որ պետությունն ինքը ևս պարտավոր է ճանաճել այլ սուբյեկտների նորմաստեղծ գործունեության արդյունքով ձևավորված նորմերը՝ դատական նախադեպը, կորպորատիվ նորմերը և այլն:

Այս առումով, մեզանում օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել գիտականորեն իմաստավորել իրավահասկացության հիմնական տիպերի, մասնավորապես՝ իրավունքի

սոցիոլոգիական դպրոցի էությունը, առանձնահատկությունները, կուտակված փորձը, դրական և խոցելի կողմերը՝ նպատակ հետապնդելով զարգացնել մեր պատկերացումները իրավունքի էության և հասարակական առաջընթացում նրա դերակատարության մասին: Այս բոլորը հնարավորություն կընձեռի ավելի կատարելագործել ազգային իրավունքի համակարգը, բարելավել իրավակիրառ և դատական պրակտիկան, առավել արդյունավետ դարձնել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներպետական կառուցակարգը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

**Թեմայի գիտական մշակվածության աստիճանը**. Հայրենական իրավագիտությունում քննարկվող թեման ուսումնասիրվել է միայն դասագրքերի սահմաններում[1]: ԱՊՀ շրջանակներում այն քիչ թե շատ ուսումնասիրված է ռուսական իրավագիտության մեջ, իսկ նախկին խորհրդային իրավագիտությունում այն ուսումնասիրվել է բացառապես, այսպես կոչված, դասակարգային շահերի տեսանկյունից և բուրժուական իրավագիտությանն արժանի հակահարված հասցնելու մտայնությամբ: Սույն հետազոտությունը համեստ ներդրում է հայրենական իրավագիտության մեջ այս բացը մասամբ լրացնելու ուղղությամբ:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է բացահայտել իրավունքի սոցիոլոգիական դպրոցի էությունը, նրա առանձնահատկությունը և գործնական նշանակությունը՝ իրավունքի համակարգի կատարելագործման ու իրավակիրառ պրակտիկայի բարելավման համար: Հետամուտ լինելով այդ նպատակին, հեղինակը փորձել է լուծել հետևյալ խնդիրները՝

✓ վերլուծել սոցիոլոգիական իրավագիտության առաջացման և զարգացման պատմական, փիլիսոփայական և գաղափարական ակունքները,

✓ բացահայտել սոցիոլոգիական իրավագիտության էությունը և առանձնահատկությունները,

✓ ներկայացնել սոցիոլոգիական իրավագիտության երկու հիմնական դպրոցների՝ եվրոպական և ամերիկյան բովանդակությունը, ընդհանրությունները,

[1] Տե՛ս Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ.՝ **Ա.Ղամբարյան, Մ. Մուրադյան:** Երևան, 2014, էջ 243-246:

տարբերությունները, և դրանց դերը եվրոպական և ամերիկյան իրավակիրառ պրակտիկայում,

✓ պարզաբանել սոցիոլոգիական իրավագիտության, որպես արդի դարաշրջանի հիմնական իրավահասկացության տիպերից մեկի դերն ու նշանակությունը իրավունքի համակարգի կատարելագործման և իրավակիրառ պրակտիկայի բարելավման խնդրում,

✓ բացահայտել իրավունքի սոցիալական հիմնավորվածությունը և իրավունքի գործողության սոցիալական կառուցակարգերի էությունը:

**Հետազոտության գիտական նորույթը.** Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ գիտական ուսումնասիրության առարկան է ժամանակակից իրավահասկացության հիմնական տիպերից՝ իրավունքի սոցիոլոգիական դպրոցը, որը նշանակալի ազդեցություն է ունեցել զարգացած իրավական համակարգերի (ամերիկյան և արևմտաեվրոպական) ձևավորման ու զարգացման, իրավակիրառ և դատական պրակտիկայի կատարելագործման հարցերում: Բացի դրանից, աշխատանքում բացահայտվել են սոցիոլոգիական իրավագիտության էությունը, առանձնահատկությունները, դրական արժանիքները և խոցելի կողմերը, ինչպես նաև աշխատանքում համակողմանի վերլուծության են ենթարկվել իրավունքի սոցիալական հիմնավորվածությունը իրավունքի գործողության սոցիալական կառուցակարգի էությունը, ժամանակակից սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական զարգացումների համատեքստում:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝**

1. Աշխատանքում հեղինակը հիմնավորում է, որ իրավունքը ոչ միայն պետության օրինաստեղծ և իրավաստեղծ իրավասու մարմինների գործունեության արդյունք է, այլ նաև դատական իշխանության մարմինների և կորպորատիվ հաստատությունների ու կազմակերպությունների իրավաստեղծության արդյունք է, որի նորհիվ լրացվում են իրավական բացերը և հաղթահարվում են իրավական անորոշությունները և հակասությունները:

2. Իրավունքի աղբյուրների համակարգում իրենց ուրույն դերակատարումն ունեն դատական և վարչական ազատ հայեցողության արդյունքում մշակվող նորմերը, որոնք ձեռք բերելով նախադեպային նշանակություն, ոչ միայն լրացնում են օրենսդրական

բացերը և համահարթում իրավական հակասությունները, պարզաբանում իրավական անորոշությունները, այլև հանդիսանում են սոցիալական զարգացման խթանիչներ:

3. Սոցիոլոգիական իրավագիտության համաձայն իրավական զարգացման ձգողության կենտրոնն ընկած է ոչ թե օրենսդրության, ոչ թե իրավական գիտության, այլ դատական որոշումների և բուն հասարակության մեջ: Հենց մարդկային ասոցիացիաների ներքին կարգն է որոշում մարդկանց ճակատագրերը, այլ ոչ իրավաբանական սահմանումները: Սոցիալական երևույթների բացատրությունը պետք է փնտրել ոչ թե իրավաբանական կառուցվածքների մեջ, այլ ածանցելով գիտական մտքի հիմնական դրույթները օբյեկտիվ փաստերից:

4. Համապատասխանաբար մարդիկ դիտում են իրենց իրավունքները որպես հենց մարդկանց հարաբերություններ, այլ ոչ դրանք կարգավորող իրավաբանական դրույթներից բխող ինչ - որ բան: Այսպես, պետության գոյությունը նախորդում է սահմանադրության ընդունմանը, ընտանիքը նախորդում է ընտանեկան իրավունքին, տիրապետումը նախորդում է սեփականության իրավունքին, պայմանագիրը նախորդում է պայմանագրային իրավունքին, ունեցվածքի ժառանգավորումը նախորդում է ժառանգական իրավունքին և այլն: Մարդկային ասոցիացիաների (համակեցությունների) ներքին կարգը ժամանակագրական իմաստով ոչ միայն նախորդում է իրավաբանական դրույթներին, այլև ինքնին ներկայացնում է իրավունքի բազիսային ձևը, որից էլ բխում են իրավաբանական կոնկրետ դրույթները:

5. «Իրավունք» հասկացության ներքո ընկալվում է իրավաբանական գործողությունները, իրավաբանական պրակտիկան և այլն: Հետևաբար, իրավունքը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունների սուբեյկտների իրական վարքագիծն է: Այստեղից էլ այս դոկտրինի այլ անվանումը՝ «կենդանի իրավունքի» տեսություն կամ հայեցակարգ: Այս «կենդանի իրավունքը», ամենից առաջ ձևավորվում է դատավորների և վարչարարների իրավաստեղծ գործունեության արդյունքում, որոնք իրենց իրավաբանական ուժով ոչ միայն չեն զիջում օրենքին և այլ նորմատիվ ակտերին, այլև լրացնում և որոշակիություն են մտցնում դրանց մեջ և արդյունավետ են դարձնում իրավակարգավորումները և դատական ու վարչական պրակտիկան:

6. Սոցիոլոգիական իրավագիտության նշանակալի ձեռքբերումներից է այն, որ իրավահարաբերության սուբյեկտներին կողմնորոշում է դեպի իրավունքի փաստացի իրականացմանը, հիմնավորում է պետական իշխանության սահմանափակումը, ապակենտրոնացված կառավարումը, ինչպես նաև հիմնավորում է հասարակական հարաբերությունների՝ որպես իրավունքի բովանդակություն՝ իրավունքի ձևի (աղբյուրի) նկատմամբ:

7. Ըստ իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների, իրավունքի աղբյուրների համակարգում (ինչպես պետական իշխանության համակարգում) նույնպես պետք է գոյություն ունենա հավասարակշռում՝ սովորույթի, օրենքի և դատական նախադեպի միջև, քանզի «կենդանի իրավունքը» նշված «եռամիության» արտաքին դրսևորում է, որը համապատասխանորեն սահմանվում է յուրաքանչյուր սոցիալական ինստիտուտի (հասարակության, պետության՝ հանձինս օրենսդրի և դատարանի (դատավորի) կողմից: Այն գտնվում է անընդհատ փոփոխության, հարաշարժության և զարգացման մեջ:

8. Սոցիոլոգիական իրավագիտության հիմնարար դրույթները հստակորեն արտահայտում են ժամանակակից սոցիալական և իրավական (իսկ ավելի ճիշտ՝ սոցիալ-իրավական) պետության էությունը, որում բոլոր իրավաստեղծ սուբյեկտների՝ պետության, հասարակության միությունների և միավորումների, դատավոնների, կողմից ստեղծված նորմերը պարտադիր են և՛ պետության, և՛ նրա քաղաքացիների համար՝ հանուն համընդհանուր բարօրության:

9. Իրավունքի սոցիալական հիմնավորվածության ժամանակակից հայեցակարգի շրջանակներում կարևոր դեր է խաղում իրավակազմիկ շահի տեսությունը: Իրավակազմիկ շահը տարբեր սոցիալական շահերի այնպիսի համաձայնեցման արդյունք է, երբ մի սուբյկետների ազատության իրագործումը չի խոչընդոտում մյուս սուբյկետների նույնչափ ազատությանը: Հենց այդպիսին է, ըստ էության, ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների համակարգի էությունն ու բովանդակությունը:

10. Իրավակազմիչ շահը հասարակական կյանքը կարգավորվող ոլորտի բոլոր սուբյեկտների ընդհանուր կարծիքի արտահայտման վերացական-իրավական ձևն է: Այստեղ կարևոր է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում խոսքն այնպիսի ընդհանուր շահի

մասին է, որի շրջանակներում սոցիալական կյանքի սուբյեկտների տարբեր (անձնական, խմբային, կոլեկտիվ և այլ) շահերը հաշվի են առնվում ու համաձայնեցվում են բոլորի համար արդար ընդհանուր-իրավական դիրքորոշման սահմաններում: Դա ամենևին էլ սոցիալիստական հասարակության կոլեկտիվիստական և հակաանհատական այն «ընդհանուր շահը» չէ, որը մարդկանցից օտարված «ամբողջի գերագույն շահ»-ի տեսքով հակադրվում էր հասարակության անդամների իրական շահերին և ճնշում էր դրանք: Ընդհանուր շահի նման տոտալիտար և, ըստ էության, հակահիրավական ընկալումը, ցավոք սրտի մինչև այժմ էլ բավականին արմատավորված է մեր հասարակության իրավագիտակցության մեջ:

11. Իրավակազմիչ շահերի բացահայտման ու բնութագրման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքացիական հասարակության՝ որպես տարբեր խավերի շահերի փոխհամաձայնության, փոխզիջման և փոխգործակցության արդյունքի հիման վրա ձևավորված ինստիտուտի սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը: Քաղաքացիական հասարակության մեջ գոյատևող բազմապիսի և բազմազան շահերը արտահայտվում են որպես օրինական պահանջներ՝ ուղղված պետական մարմիններին և հաստատություններին՝ բավարարելու համար: Իրավունքի սոցիոլոգիայի տեսանկյունից՝ քաղաքացիական հասարակության շահերը կարող են արտացոլվել իրավական ձևերով՝ հռչակագրով, հայտարարություններով, համաձայնագրերով և այլն:

12. Սոցիալապես պայմանավորված իրավական համարժեք որոշման՝ այսինքն իրավական հավասարության սկզբունքի հիման վրա սոցիալական համաձայնեցված շահերի հաշվառումով որոշման մշակումը ստեղծագործական բարդ գործընթաց է, որով հիմնավորվում է իրավունքի սոցիալական պայմանավորվածությունը: Դրա նպատակն է ապահովել տվյալ պահին առավելագույն հնարավորությունը, իրագործել իրավական հավասարության սկզբունքը՝ հաշվի առնելով սոցիալական համատեքստը: Իսկ դրա համար անհրաժեշտ է կատարել բարդ վերլուծական աշխատանք՝ կապված կարգավորվող հարաբերությունների վրա ներազդող գործոնների գնահատման հետ, և գտնել իրավական այնպիսի համարժեք որոշում, որը նվազագույնի կհասցնի այն գործոնները, որոնք առավելագույն չափով խեղաթյուրում են հավասարության հարաբերությունները սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրագործման ոլորտում: Այս առումով իրավունքը սոցիալական հարաբերությունների այնպիսի

կարգավորիչ է, որը կապակցում ու համաձայնեցնում է միմիանց հետ սոցիալական այլ կարգավորիչների նպատակներն ու ձևերը, թույլ չտալով հասարակական կյանքի որևէ առանձին ոլորտի կարգավորումը իրականացնել ի վնաս սոցիալական ամբողջի կամ հասարակական հարաբերությունների մյուս ոլորտների, ինչպես նաև ապահովում է հասարակական հարաբերությունների համակարգային հավասարակշռությունն ու կայունությունը: Այս առումով կարելի է ասել, որ իրավական վերահսկումը հանդիսանում է սոցիալական վերահսկման ողջ համակարգի կառուցվածքային տարրերի ինտեգրման գործոն:

13. Իրավունքի՝ որպես սոցիալական վերահսկման միջոցի արդյունավետությունը կախված է, առաջին հերթին, հենց իրավական կարգավորիչների որակից. կարգավորվող հարաբերությունների էությանը իրավական նորմերի համարժեքությունից, իրավակազմիչ շահերը արտահայտելու դրանց ունակությունից, նյութական նորմերի իրականացման դատավարական երաշխիքներով և կոնֆլիկտները ինստիտուցիոնալ ձևերով լուծման ապահովվածությունից, իրավակիրառ գործունեության արդյունավետությունից և այլն: Սոցիալական վերահսկման համակարգում իրավունքի գործունեության մյուս կարևորագույն գործոններն են՝ հասարակության իրավական մշակութային մակարդակը, հասարակության կողմից իրավունքի միջոցով պաշտպանվող արժեհամակարգը, իրավունքի սոցիալական վարկանիշը, իրավակարգավորումների արդյունավետությունը:

**Հետազոտության մեթոդաբանական հիմունքները.** Ատենախոսության շրջանակում հետազոտությունները կատարվել են համընդհանուր (փիլիսոփայական, աշխարհայացքային մոտեցումներ), համագիտական (վերլուծություն, սինթեզ, համակարգային և ֆունկցիոնալ մոտեցումներ), ինչպես նաև կոնկրետ (համեմատական իրավական, ձևական-իրավաբանական վերլուծության) մեթոդներով:

Աշխատանքի համար որպես **տեսական բազա** են ծառայել հայրենական և ռուս գիտնականներ՝ Գ.Բ. Դանիելյանի, Ա.Շ. Հարությունյանի, Գ.Գ. Հարությունյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Ս.Ս. Ալեքսեևի, Է. Աներսի, Վ.Կ. Բաբազևի, Ա. Բաբակի, Մ.Ի. Բայտինի, Վ.Մ. Բարանովի, Ժ.Լ. Բերժելի, Գ. Բերմանի, Ա.Բ. Վենեգրովի, Յու.Ի. Գրևցովի, Ս.Վ. Բոբոտովի, Վ.Գ. Գրաֆսկու, Ս.Ա. Դենիսովի, Կ.Կ. Ժոլի, Ի.Ի. Կալինիի, Ի.Յու. Կոզլիխինի, Դ.Ա. Կերիմովի, Վ.Ն. Կուդրյավցովի, Վ.Պ. Կազիմիրչակի,

Վ.Վ. Լապաևայի, Վ.Վ. Լազարևի, Վ.Պ. Մալախովի, Գ.Վ. Մալցևի, Մ.Ն. Մարչենկոյի, Ս.Վ. Մոիսնի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ա.Վ. Պոլյակովի, Լ.Ի. Սպիրիդոնովի, Վ.Մ. Սիրիխի, Վ.Ա. Տումանովի, Յու.Վ. Տիխոնրավովի, Ի.Լ. Չեստնովի, Բ.Ն. Չիչերինի, Գ.Ֆ. Շերշևնևիչի, Լ.Ս. Յավիչի և այլոց աշխատությունները:

**Աշխատանքի համար աղբյուրագիտական հիմք են** ծառայել սոցիոլոգիական իրավագիտության դպրոցի նշանավոր ներկայացուցիչների՝ Կոնտի, Դյուրկհամի, Յերինգի, Փաունդի, Էրլիխի, Ռուլանի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը.** Աշխատանքի գիտատեսական նշանակությունը նրանում է, որ մենագրության ձևով ամփոփված է արդի իրավահասկացության հիմնական տիպերից մեկի՝ իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ձևավորման և զարգացման, իրավունքի սոցիալական հիմնավորվածության հետ կապված համալիր հիմնախնդիրները, որը, անշուշտ ճանապարհ կբացի հետագա հետազոտողների և ուսումնասիրողների համար:

Գործնական առումով, այն օգտակար կլինի իրավունքի տեսության և պատմության, իրավական ուսմունքների պատմության դասընթացների ուսումնառության ընթացքում, ինչպես նաև իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների աշխատակիցների համար:

**Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը.** Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել են դրա նախնական քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության համար:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մի շարք հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը.** Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են յոթ ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

## Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Աշխատանքի ներածական մասում հեղինակը հիմնավորում է թեմայի հետազոտության արդիականությունը, նրա տեսական և գիտական նշանակությունը, ինչպես նաև ներկայացնում է թեմայի գիտական մշակվածության աստիճանը,

հետազոտության մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

**Աշխատանքի առաջին գլուխը՝ «Իրավաբանական սոցիոլոգիայի առաջացման պատմական և գաղափարական նախադրյալները, էությունն ու առանձնահատկությունները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Իրավաբանական սոցիոլոգիայի առաջացման պատմական և գաղափարական նախադրյալները»** վերնագրով, համակողմանի ներկայացվում է իրավաբանական սոցիոլոգիայի ձևավորման պատմական և գաղափարական նախադրյալները և աղբյուրագիտական հիմքերը:

Իրավաբանական սոցիոլոգիայի (իրավունքի սոցիոլոգիայի) երևան գալու ժամանակն է ճանաչվում 19-րդ դարի վերջը - 20-րդ դարի սկիզբը: Իրավաբանական սոցիոլոգիայի (իրավունքի սոցիոլոգիայի) հիմնադիրներ են հանդիսանում է. Դյուրկհեյմը, Մ. Վեբերը և Ե. Էրլիխը՝ բավականին տարբեր և գիտական առումով նույնիսկ մրցակցող հետազոտողներ, որոնց հայեցակարգերը, սակայն, թույլ են տալիս խոսել իրավաբանական սոցիոլոգիայի որպես գիտական ճանաչման ձևավորված ուղղության մասին:

Իրավաբանական սոցիոլոգիայի ծագման և հետագա զարգացման պատմական և գիտական նախադրյալները, ըստ էության, նույնն են, ինչ որ և սոցիոլոգիայի որպես գիտության ծագման ու զարգացման նախադրյալները: Առանձնահատկությունը նրանում է այդ ազդեցությունը, որ գործել են իրավաբանական սոցիոլոգիայի վրա իրավական, իրավական-փիլիսոփայական քաղաքական-իրավական և սոցիոլոգիական միտքը:

Իրավաբանական սոցիոլոգիայի, ինչպես և սոցիոլոգիայի պատմական արմատները կապված են այն խոր տնտեսական, սոցիալական, քաղաքական փոփոխությունների հետ, որոնք տեղի ունեցան Եվրոպայում և Ամերիկայում նոր ժամանակներում, հատկապես ամերիկյան և ֆրանսիական մեծ հեղափոխություններից հետո, որպես քաղաքակրթության բեկման սահմանագիծը՝ մարդու իրավունքների, տնտեսական հարաբերությունների ազատության, քաղաքական ժողովրդավարության սկզբունքների ճանաչման խնդրում: Գաղափարափիլիսոփայական առումով այս փոփոխությունները հռչակվել են Լուսավորության դարաշրջանի փիլիսոփայության կողմից՝ ազատական և

բնական-իրավական տեսություններում: Սահմանադրական-իրավական առումով նրանք իրենց արտահայտությունը ստացան ԱՄՆ-ի Սահմանադրության (1787) և Իրավունքների մասին բիլլի (1789), ինչպես նաև ֆրանսիական Մարդու և քաղաքացիների իրավունքների մասին հռչակագրի (1789) մեջ:

**Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Իրավաբանական սոցիոլոգիայի էությունը և առանձնահատկությունները»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավաբանական սոցիոլոգիայի էությունը, բովանդակությունը և առանձնահատկությունները:

Ի տարբերություն իրավական պոզիտիվիզմի, որն իրավաբանական գիտության խնդիրները սահմանափակում է գործող իրավունքի ձևական-տրամաբանական ուսումնասիրմանը, սոցիոլոգիական դպրոցը ծանրության կենտրոնը տեղափոխում է դեպի «կենդանի իրավունք», այսինքն դեպի իրավահարաբերությունների համակարգ, դեպի իրավունքի ոլորտում մարդկանց վարքը: Սոցիոլոգիական իրավագիտությունը (ի տարբերություն նեոպոզիտիվիզմի) համարում է, որ օրենքներում և այլ իրավական ակտերում գրանցված նորմերը դեռ բուն իրավունք չեն: Շատ ավելի կարևոր է այն իրավունքը, որը ձևավորվում է կյանքում: Այս «կենդանի իրավունքը» հակադրվում է հոդվածների կետերում ու հոդվածներում կաղապարված «գրքային իրավունքին»:

Սոցիոլոգիական իրավագիտության համար բնորոշ է գլխավոր ուղղության շեշտադրությունը ոչ թե իրավունքի էությանը, այլ այն, թե ինչպես է գործում իրավունքը:

Իրավունքի սոցիոլոգիական դպրոցի շնորհիվ գործող պոզիտիվ իրավունքը մշտապես գտնվում է հարաշարժության և կատարելագործման գործընթացում: Իրավունքը կենսագործվում է ոչ թե պոզիտիվ օրենսդրությունում, այլ իրավակիրառ պրակտիկայում: Իրավունքը իրավաբանական գործողություններ են, դատական և վարչական պրակտիկա, իրավական նորմերի կենսագործում: Այստեղից էլ տրամաբանորեն բխում է այս տեսության այլ անվանումները՝ «կենդանի իրավունք», «ազատ իրավունք»:

**Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Իրավաբանական սոցիոլոգիայի եվրոպական և ամերիկյան դպրոցների առանձնահատկությունները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլուխներից:

**Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Ավստրոգերմանական**

**սոցիոլոգիական իրավագիտության առանձնահատկությունները»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում իրավունքի ավստրոգերմանական դպրոցի հայեցակարգային մոտեցումները, դրանց բովանդակային առանձնահատկությունները:

19-20-րդ դարերի սահմանագծին հանուն «ազատ իրավունքի» շարժումը հանդես եկավ որպես իրավաբանական պոզիտիվիզմի գաղափարական հակադրություն և իր վրա վերցրեց օրենքի պաշտամունքը պսակազերծ անելու առաքելությունը: Ընդգծենք, որ առավել լայն տարածում ստացավ այդ շարժումը Գերմանիայում: Նրա գաղափարական նախորդներն էին գերմանացի հեղինակներ Շլոսմանը, Ադիկեսը, Յերինգը, Բյուլովը և այլն, իսկ ծրագրային դրույթները տեսականորեն մշակվեցին էրլիխի, Վուրցելի, Կանտորովիչի, Ռումպֆի, Շտամպեի, Յունգի, Ռադբրուխի և այլ գիտնականների աշխատություններում:

Իրավունքը, ըստ Ռուդոլֆ Իերինգի տեսության, հանդիսանում է բառիս ամենալայն իմաստով սոցիալական կյանքի պայմանների հանրագումար՝ ապահոված պետության ու հզորությամբ արտաքին հարկադրանքի միջոցների շնորհիվ: Այսպիսով, իրավունքը պարունակում է երեք կարևորագույն տարրեր. նպատակ, գործողություն (և դրա արդյունք) և հարկադրանք (համապատասխան վարքագծի դեպքում):

**Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Իրավաբանական սոցիոլոգիայի ֆրանսիական դպրոցի ձևավորումը և զարգացումը»** վերնագրով, ներկայացվում է իրավաբանական սոցիոլոգիայի ֆրանսիական դպրոցի առանձնահատկությունները: Այս ենթագլխում համակողմանի վերլուծվում են Ֆրանսիայի իրավաբան-սոցիոլոգների՝ Լևոն Դյուգիի, Էմիլ Դյուրկհայմի, Մորիս Օրիուի հայացքները իրավունքի նպատակի, դերակատարության, մասնավորապես՝ սոլիդարիզմի (համերաշխության) հայեցակարգի տարրեր երանգավորումները:

**Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Իրավունքի սոցիոլոգիայի դպրոցի ձևավորումը և զարգացումը ԱՄՆ-ում»** վերնագրով, հեղինակը ներկայացնում է իրավունքի սոցիոլոգիայի ամերիկյան դպրոցի, մասնավորապես՝ ռեալիստների հայեցակարգային առանձնահատկությունները: Այսպես, հետևելով Էրլիխին, ամերիկյան դպրոցի ներկայացուցիչները, մասնավորապես՝ Փաունդը նույնպես հակադրում է «Իրավունքը գրքերում» և «իրավունքը գործողության մեջ»: Իրավունքի տակ Փաունդը

հասկանում է երեք փոխկապակցված երևույթ՝ առաջին՝ իրավական կարգը, որը պաշտպանվում է հասարակության քաղաքական կազմակերպություն՝ պետության հարկադրանքի ուժով: Երկրորդ, իրավունքը որպես իրավական նորմերի հանրագումար, երրորդ՝ իրավունքը որպես արդարադատության իրականացում, այստեղ ներառելով ոչ միայն դատական իշխանություն, այլև վարչական մարմիններին:

**Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Իրավունքի սոցիալական հիմնավորվածությունը և գործողության սոցիալական կառուցվածքը»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

**Աշխատանքի երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Իրավունքի սոցիալական հիմնավորվածությունը»** վերնագրով, հեղինակը համակողմանի ներկայացնում է իրավունքի սոցիալական նշանակությունը և հիմնավորվածությունը:

Իրավունքի սոցիալական հիմնավորվածությունը իրավունքի համապատաս-խանատվությունն է կարգավորվող հասարակական հարաբերություններին, նրա ունակությունը՝ արտացոլելու հասարակական կյանքի օբյեկտիվ պահանջմունքները:

**Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Իրավունքի գործողության սոցիալական կառուցակարգը»** վերնագրով, հեղինակը բացահայտում է իրավունքի սոցիալական հիմնավորվածության կառուցակարգի հիմնախնդիրները:

Խոսելով իրավունքի մասին՝ նրա սոցիալական կապերի համակարգի առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ մի կողմից տարբերավում է իրավունքի ձևավորման սոցիալական նախադրյալները և դրա հետ կապված օրենսդրության սոցիալական պայմանավորվածության հիմնահարցը, իսկ մյուս կողմից՝ իրավունքի գործողության սոցիալական հետևանքները և օրենսդրության արդյունավետության հիմնախնդիրը: Առաջին դեպքում խոսքը գնում է իրավունքի ձևավորման և զարգացման վրա ներազդող գործոնների մասին, իսկ երկրորդ դեպքում բուն իրավունքը դիտարկվում է որպես հասարակական հարաբերությունների վրա ներազդող գործոն: Իրավունքի սոցիոլոգիայի հետազոտման առարկա հանդիսացող այս երկու շերտերի միջև գտնվում է սոցիալ-իրավական հարցադրումների մի ամբողջ համալիր, որի շրջանակներում իրավունքը որպես հասարակական կյանքի գործոն կարող է դիտարկվել սոցիալական այլ գործոնների հետ իր փոխգործակցություններում: Իրավունքի սոցիոլոգիայի հետազոտման այդ ոլորտը կազմում է իրավունքի սոցիալական գործառույթների

(ներառյալ իրավունքի ինտեգրատիվ գործառույթը, սոցիալացման գործառույթը և սոցիալական վերահսկման գործառույթը) և իրավունքի գործողության սոցիալական մեխանիզմի հարցերը:

Իրավունքը կարևորագույն գործիքն է հասարակության միասնության պահպանման ու ապահովման համար: Իրենից տարբեր հաճախ միմյանց հետ հակամարտող սոցիալական գործողությունների սուբյեկտների ամբողջականություն ներկայացնող հասարակությունը իր միասնականությունը գտնում է հենց իրավունքի և պետության մեջ:

Կարևոր է նկատի ունենալ, որ իրավունքի վրա հիմնված սոցիալական միասնությունը տարբերությունների միասնություն է, այլ ոչ դրանց բացառում կամ համահարթեցում: Իրավունքը ինտեգրում է հասարակությունը՝ չունիֆիկացնելով այն:

**Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.**

1. Իրավունքի սոցիոլոգիական տեսությունը ձևավորվեց XIX դարի 2-րդ կեսին և տրամաբանորեն առավել ավարտուն ձև ստացավ 20-րդ դարում:

Ըստ այդ տեսության իրավունքը և օրենքը տարանջատվում են: Իրավունքն արտահայտվում է ոչ բնական իրավունքներում, ոչ էլ օրենքներում, այլ օրենքների իրականացման մեջ: Եթե օրենքը գտնվում է պատշաճի ոլորտում, ապա իրավունքը գոյի ոլորտում:

2. «Իրավունք» հասկացության ներքո ընկալվում է իրավաբանական գործողությունները, իրավաբանական պրակտիկան, իրավակարգը, օրենքների կիրառումը և այլն: Իրավունքը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունների սուբյեկտների իրական վարքագիծն է: Այստեղից էլ այս դոկտրինի այլ անվանումը՝ «կենդանի» իրավունքի տեսություն:

3. Այդպիսի «կենդանի» իրավունք ամենից առաջ ձևավորում են դատավորները իրավաբանական գործունեության ընթացքում: Նրանք «լրացնում են» օրենքները դատական իրավունքով, կայացնելով համապատասխան որոշումներ և այդ դեպքում հանդես գալիս, որպես իրավաստեղծման սուբյեկտներ:

4. Իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ընկալումը կողմնորոշում է իրավունքի իրականացմանը, գոյին, որտեղ այն ձեռք է բերում պրակտիկ իրականացում, հիմնավորված նշվում է հասարակական հարաբերությունների առավելությունը, որպես

իրավական ձևի նկատմամբ բովանդակության, ինչպես նաև հիմնավորվում է տնտեսությունում պետական միջամտության սահմանափակման, ապակենտրոնացված կառավարման հայեցակարգը:

5. Ազատ իրավունքի տեսության նպատակն է ոչ միայն վերլուծել իրավական գործընթացը որպես սոցիալական իրականության փաստ, այլև ղեկավար ցուցումներ տալ դատավորին արդարադատության պահանջմունքների գրավոր օրենքի հարմարեցնելու վերաբերյալ:

6. «Ազատ իրավունքը» անհրաժեշտ է ոչ միայն ձևական իրավունքի անբավարարության պատճառով՝ այն պետք է ճանաչվի որպես գոյություն ունեցող փաստ, քանի որ երբ դատավորները ստեղծում են ձևական նոր իրավունք, ապա չի կարելի ասել, որ մինչև այդ պահը գոյություն չունեին տվյալ գործի հետ առնչվող ոչ մի իրավական նորմեր: Սոցիոլոգիական հետազոտությունները և հայեցակարգերը իրավունքի ոչ հեռու պատմության և ժամանակակից սոցիալական պայմանների մասին անհրաժեշտ իմացության շնորհիվ օգնում են նորածին իրավունքի ձևավորմանը: Ցանկալի իրավունքի ձևավորումը տեղի է ունենում իրավական հարաբերությունների միջոցով, ինչը ենթադրում է օրենսդրի ակտերի հնարավոր բոլոր մեկնություններից այն կոնկրետ մեկնման ընտրությունը, որն նպաստում է տվյալ իրավաբանական ակտի նպատակին հասնելուն:

7. Իրավաբանորեն պաշտպանվող շահերը ըստ իրավունքի սոցիոլոգիայի դպրոցի բաժանվում են երեք հիմնական խմբի, ա) հանրային շահերի բ) անհատական շահերի, գ) հասարակական շահերի: Հանրային շահերը ներառում են. 1) Նրա՝ որպես պետության 2) որպես հասարակական շահերի երաշխավորի: Անհատական շահերը կազմում են. 1) անձի շահերը, ինչպիսիններից են ֆիզիկական ամբողջականության պահպանումը, կամքի ազատությունը, վարկանիշը, կրոնի և կարծիքի ազատությունը, 2) ընտանեկան հարաբերությունների շահերը, ինչպիսիք են՝ ընտանիքի պաշտպանությունը, խնամքի վերաբերյալ հայցերը և ծնողների ու զավակների միջև իրավաբանական հարաբերությունները, 3) նյութական հարաբերությունները, ինչպիսիք են՝ սեփականության պաշտպանությունը, կտակի ազատությունը, ձեռներեցության և պայմանագրի ազատությունը: Հասարակական շահերն կազմում են. 1) ընդհանուր անվտանգությունը, 2) սոցիալական ինստիտուտների անվտանգությունը, 3) ընդհանուր

բարոյականությունը, 4) հասարակական ռեսուրսների պաշտպանությունը՝ չարաշահումից, 5) ընդհանուր առաջադիմումը, 6) մարդու կյանքի պաշտպանությունը:

8. Իրավունքի սոցիոլոգիական դպրոցի դրական կողմերից է նաև այն կանխադրույթը, ըստ որի՝ իրավական (դատական և վարչական) պրակտիկան կողմնորոշում է դեպի իրավունքի իրագործումը (իրացումը) հասարակական հարաբերություններում: Առավելևս, իրավունքի սոցիոլոգիական դպրոցը գերապատվությունը տալիս է կոնկրետ հասարակական հարաբերություններին՝ որպես իրավունքի բովանդակությանը, իսկ իրավական նորմը՝ որպես իրավունքի արտահայտման արտաքին ձև:

9. Ազատ իրավունքի հայեցակարգը չափազանց մեծ լիազորություններ է տալիս դատավորներին: Դրանով իսկ այն ճանապարհ է հարթում դատական ակտերի կանխատեսելիության համար: Ասել, ինչպես Էրլիխը, որ դատական որոշումը կամայական չէ հանդիսանում, քանի որ պայմանավորված է դատավարական ավանդույթներով և նախադեպերով, որոնք ամրագրված են նախկին ժամանակների դատական արձանագրություններում, որոշումներում: Հեղինակի կարծիքով, այս տեսությունը բառիս բուն իմաստով, տեղափոխում է գլխավոր խնդիրը իրավունքի քարացած, վերացական բովանդակությունից դեպի դինամիկ, հարաշարժ կենդանի իրավունք, որը գտնվում է հասարակական հարաբերությունների մեջ:

10. Իրավունքի գործողության սոցիալական մեխանիզմը՝ սոցիոլոգիական գործոնների փոխգործակցության այն շղթան է, որի օգնությամբ կոնկրետ իրավական նորմի բովանդակությունը մարմնավորվում է այդ բովանդակությանը համապատասխանող մարդկանց իրավական վարքի մեջ: Երբ խոսում ենք իրավունքի գործողության սոցիալական կամ այլ (իրավաբանական, հոգեբանական) մեխանիզմի մասին, ապա կարևոր է նկատի ունենալ, որ գործ ունենք ոչ թե հասկացության, այլ ձևավոր արտահայտության հետ: Իրավունքը գործում է ոչ ինքնին. գործում են մարդիկ՝ իրավունքին համապատասխան կամ խախտելով այն:

**Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝**

1. Իրավահասկացության սոցիոլոգիական դպրոցը //«Օրինականություն», 2010, № 57, էջ 54-55:

2. Սոցիոլոգիական իրավագիտության ֆրանսիական դպրոցի առանձնահատկությունները //«Օրինականություն», 2010, № 58, էջ 42-47:

3. Իրավունքի գործողության սոցիալական կառուցվածքը //«Օրենք և իրականություն», 2011, № 2, էջ 15-17:

4. Իրավունքի սոցիոլոգիական դպրոցի ձևավորումը և զարգացումը ԱՄՆ-ում //«Օրենք և իրականություն», 2011, № 3, էջ 11-13:

5. Իրավունքի սոցիոլոգիայի հիմնախնդիրներ: Մենագրություն, Երևան, 2016թ., 86 էջ:

6. Իրավունքի սոցիալական հիմքերը (տեսական վերլուծություն): Մենագրություն, Երևան, 2016թ., 72 էջ:

**Мхитарян Рима Гагиковна**

# Проблемы формирования и развития социологической школы права (историко-теоретический анализ)

## Резюме

Актуальность темы исследования. С точки зрения правовой системы, формирующейся у нас на основе демократических принципов, значительную роль играет тип правопонятия. Тип правопонятия имеет большое влияние как в сфере правотворчества, так и в практике применения права. В современной эпохе эта проблема с большей остротой проявилась в контексте сближения и взаимодействия разных правовых семей (систем). Сближение и взаимодействие правовых систем является одним из объективных процессов эпохи, который обусловлен факторами экономической, политической, правовой глобализации, более тесного взаимодействия государств, большего сотрудничества в экономической и других сферах. С данной точки зрения, типы понятия права, в частности те, которые выдержали испытание историей, в том числе социологическая школа права, имеют свои задачи в современном этапе общественного развития. Социологическая школа права, формировавшаяся и нашедшая развитие в 19-20 веках, уже сыграла существенную роль в вопросах эффективного управления общественных отношений, повышения эффективности юриспруденции, ограничения государственной власти, защиты прав и свобод человека и гражданина, а также в деле формирования гражданского общества и становления социально-правового государства.

Кроме того, социологическая школа права способствовала более глубокому восприятию понятия права, и, что правотворческая деятельность вовсе не является абсолютной монополией государства, что круг правотворческих субъектов шире, следовательно государство само обязано подчиняться нормам, формировавшимся в результате правотворческой деятельности других субъектов.

Цели и задачи исследования. Основной целью диссертации является выявление сущности социологической школы права, ее особенностей практического значения для улучшения практики правоприменения и совершенствования системы права. Для достижения этой цели автор попытался решить следующие задачи:

✓ анализировать исторические, философские и идеологические истоки возникновения и развития социологической юриспруденции,

✓ выявить сущность и особенности социологической юриспруденции,

✓ раскрыть содержание двух основных школ: социологической юриспруденции-европейской и американской, их общие и отличающие черты и роль в европейской и американской практике правоприменения,

✓ выявить роль и значение социологической юриспруденции, как одного из основных типов правопонятия современной эпохи в вопросе совершенствования системы права и улучшения практики правоприменения,

✓ выявить социальную обоснованность права.

На основе позитивистской концепции познания в теории права во второй половине XIX в. сложились два направления исследований: 1) юридический позитивизм (ле-гизм) и 2) социологический позитивизм. В рамках обоих направлений право сводилось лишь к наблюдаемому праву (т.е. к неким социальным фактам, поддающимся эмпирическому наблюдению). При этом оба названных подхода к праву отрицали научный характер исследований природы и сущности права, как особого социального феномена и относили данную проблему к области метафизики, выдумки, иллюзии.

Несмотря на то, что юридический позитивизм и социологический позитивизм имели общую теоретико-методологическую основу (позитивистскую философию), предопределявшую их отказ от исследований сущности права и причинно-следственных связей в развитии права, они тем не менее принципиальным образом отличались друг от друга в понимании того, что такое право, как надо его изучать, что составляет предмет исследования теории права.

Научная новизна диссертации состоит в том, что в отечественной юриспруденции впервые объектом научного исследования становится один из основных типов современного правопонятия - социологическая школа права, которая имела существенное влияние в вопросах формирования и развития развитых правовых систем (американской и западноевропейской), совершенствования судебной практики и правоприменения. В связи с этим, в работе выявляются сущность, особенности, положительные и уязвимые стороны социологической юриспруденции, раскрывается и социальная обусловленность права в контексте современных социально - экономических и политико-правовых развитий.

Материалы и основные выводы данной диссертационной работы могут быть использованы в учебном процессе, а также в правотворческой деятельности.

**Rima Gagik Mkhitaryan**

# Problems of formation and development of the sociological school of law (historical and theoretical analysis)

## Summary

Relevance of the research topic. From the point of view of the legal system, we have formed on the basis of democratic principles, the type of right concept plays a significant role. The type of right concept has a great influence in the field of law-making as well as in the practice of law. In the modern era, this problem with greater severity revealed in the context of convergence and interaction of different legal families (systems). The convergence and interaction of legal systems is one of the objective processes of the era, which is due to factors of economic, political and legal globalization, closer cooperation among States, more cooperation in economic and other spheres. From this perspective, the concept of the right types, in particular those that have stood the test of history, including the sociological school of law, have their own problems in the present stage of social development. Sociological School of Law, which was formed and has found development in 19-20 centuries, has already played a significant role in the effective management of public relations, enhance the effectiveness of law, government restrictions, protection of the rights and freedoms of man and citizen, as well as in the formation of civil society and the establishment of social and legal state.

In addition, the sociological school of law has contributed to a better perception of the concept of law, and that law-making is not a monopoly of the state, that the range of law-making subjects is wider, therefore the State itself is obliged to obey the rules, formed as a result of law-making activity by other entities.

Goals and objectives of the study. The main aim of the thesis is to identify the essence of the sociological school of law, its features of practical significance to improve the enforcement and improvement of the legal system. To achieve this, the author tried to solve the following problems:

✓ Analyze the historical, philosophical and ideological roots of the emergence and development of sociological jurisprudence,

✓ Uncover the contents of the two main schools of sociological jurisprudence - European and American, their common and differing features and role in the European and American practice of law enforcement,

✓ identify the social validity of rights.

In the second half of the XIX century, on the basis of the positivist conception of knowledge in the theory of law two lines of research have developed: 1) legal positivism and 2) the sociological positivism. Under both directions right to be confined to the observed law (i.e. to a certain social facts, amenable to empirical observation). At the same time, both these approaches to the right to denied the scientific nature of research of the nature and spirit of the law, as a specific social phenomenon and attributed the problem to the field of metaphysics, fiction, an illusion.

Despite the fact that legal positivism and sociological positivism had a common theoretical and methodological basis (positivist philosophy), predetermining their refusal to study the essence of law, and cause-effect relationships in the development of the law, nevertheless, they are fundamentally different in the understanding of what is right, how to study it, which is the subject of the Theory of Law.

The scientific novelty of the thesis is that for the first time in domestic law an object of scientific research is becoming one of the main types of modern concept of right - sociological school of law, which had a significant influence in the formation and development of advanced legal systems (the US and Western European), improvement of judicial practice and enforcement .

In this regard, the work reveals the essence, features, positive sides and vulnerabilities of sociological jurisprudence, social conditionality of law is also revealed in the context of contemporary socio-economic, political and legal developments.

Materials and main conclusions of the thesis can be used in the educational process, as well as in law-making.